

Գ Ր Ա Կ Ա Ն Դ Է Մ Ք Ե Ր

ሀህዮሪያ ሊፋፋይ ደብዳቤ

(C-70-2-1-81-2: 1-49)

7.

կը ստիպէ իւր վրայ լալու, եւ կը յաւերժացնէ իւր անունը: Արդի մեծ քաղաքներէն մեծագոյններէն մէկն եղած է այս վերջին տարիներն՝ Վիեննան, Յւսթֆիւ Դր. Լուէգէրին, որ գիտացած է անշաջատը մնալ, մերժելով կառաքելիներու ներկայացուցած միլիոնները...: Ահա՛ նկարագիր իւր, որ հաճաք կը պատմաւէ մարդուս, շարժելով հանդերձ մեր բարի նախանձը: Յուշարկաւորութեան հանգեմին մէկ միլիոն յուշարկաւոր կը հաշուին: Վասյո՛ւ ու արքիդուքսեր եւ արաքիդքսուհիներ, դեսպաններ, հիւպատոսներ են, վերջին պատիւը մատուցին այս՝ «մեծ մարդուն», որ ՀԱՅՍՏԱՅԻՆ ԴՈՒՆԱԳԱՆԻ ՄԸ ՋԶԱՒԱԿՆ ԻՐ՝ Կարգապէս իւր կորովին պարտական է Դր. Լուէգէր իւր անունը:

Ինչո՞ւ պահսի այս կորովը մեզի...

Մեծ օրինակներն յառաջ կը բերուին, ոչ թէ ամբողջապես եւ ամէն բանի մէջ օրինակութիւն համար, այլ փոքր ի շատե՛ իւրաքանչիւրն իւր բաժինն անկէ քաղելու համար։ Մեր երեսփոխաններուն իբր օրինակ տուի՞նք։

զԴՐ. Լուէգէր, բայց մենք՝ Հայերս, ալ պէտք
ունինք այս մեծ յուսէն յուսաւորուելու: — —

Հրճուանքը կը գիտէինք եւ կը գիտենք՝
այն ջանքերն որ կ'ըլլան, մեր կուսակցութիւն-
ներն իրարու մերձեցնելու եւ համարաշխ գոր-
ծունէութիւն մը յառաջ բերելու եւ ահա
աղէն ձախէն յարձակումներ այս ջանքերու դէմ:
Չեմ յիշեր ո՞ր թերթին մէջ կարգացի սա դա-
տակարտն են խաթարուածութիւն: Համարաշխ ըլ-
լալ կը ջնանք կուսակցութիւններն, որպէս զի-
տախտի ազատ գոռնէն, կողոպտեն: Եւ գիտէք,
թնամի թերթ մը չէ այս սողորմ գորղը, այլ
հայ տառերով հրատարակուած հայերէն թերթ
/ը/: Բայց որչափ կը նախատեսենք, բարի ջանք
ունեցողներու դէմ՝ կ'արձակուին այս քարերը՝
նշան եւ թէ՛ օր մը պիտի իրականանայ այս ամե-
նուն փափաքները համարաշխութիւնը, Որչափ
պիտի դիւրանաք գործը, ի՞նչ հայ երեսփո-
խանմար տային առաջին նշանը:

ፎታቦግራፊ ሂሳብና ስራ



Երեւանն ահա հանգի Եւտօքարակ գիւղում ծնունդ առաւ մեր քնարերգական բանաստեղծը, Հայրը՝ Յէր Սիմեոն քահանայ մի առանձին աղքէցութեամբ շուռնուցեալ երես մանկական արտին ու մտքին, որովհետեւ վախճանուեց 1847 թուի խոյրեայի համաճարակի ժամանակամիջոցին, երբ Սմբատ վերաորական չկար։ Աւելի մեծ եւ բարեբաղ պարզեցու թիւն ունեցաւ մայրը՝ Խորովիկազուհե, որն աւելորդ գիւղում յայտնի էր բերքի առաւելի գեղեցիկէն, ինչպէի որ հայտնի էր բերքի առաւելի գեղեցիկէն։ Աւելի մեծ եւ բարեբաղ պարզեցու թիւն ունեցաւ մայրը՝ Խորովիկազուհե, որն աւելորդ գիւղում յայտնի էր բերքի առաւելի գեղեցիկէն, ինչպէի որ հայտնի էր բերքի առաւելի գեղեցիկէն։

12 արքեպիսկոպոս Թոդնում է ծննդա-
վայր Աշտարակը եւ գնում Մոսկովա, որը նրա ե-
կրորդ հայրենիքը դարձաւ 1852ից մինչեւ 1906
Իրաւական վերջըրը, ուր սկզբից մտնելով Լազա-
րեան շէմարանը՝ 10 տարու մէջ աւարտած է
գաղտնիացըրը, մնալով վերակացու եւ Հայոց Է-
կզուի ուսուցիչ պատրաստական գաւառաւորում, իսկ
Մօսկր մագիստրոսի մահից յետոյ շարունակում էր
նոյն լեզուի եւ գրականութեան գաւառաւորութեան
պաշտօնավարութիւնը բարձր դաստարաններում
մինչեւ 1897: Եւ միայն Մոսկուայից կարողացաւ
1873ին մի փոքրիկ անաւպարհաւորութիւն կառա-
րել զեպի ծննդավայր զիւրը՝ գլխաւորապէս մօրը
կարօտած, որի մանկարարէ ինձամբի եւ գորովմբի
սակ ստացել էր մի զգուշեան սիրտ, այնքան
պայտելի:

Բանաստեղծական բնատուր ձևերը և շնորհը
շատ վաղ սկսուեց նրա մէջ: Դեռ գաղտնական
նստարանից նա գրում, շարագրում էր ստանալու
ներ, որոնք 1859ին հրատարակուեցին «Ճա-»

քաղի» մէջ։ Բայց նա շուտով ազատուեց թէ՛ «Ճառքաղից», եւ թէ՛ գրաբարամուր աստաւաորներ գրելու մեղքէն։ Արդէն աշխարհական օրերից նա կարգում, ծանօթանում էր եւրոպական գրականութեան, եւ այնքան խոր տպաւորութեամբ իր տաղանդը զարգացնում, որ Հէքսպիլի, Պուշկինի, Գէօթէի, մանաւանդ անգլիացի բանաստեղծ լորդ Բայթոնի մտքի ազդեցութեան հետքերն ու նշոյլները շատ տեղ երեւան են գալիս նրա աստաւաորների տողերում։

1807ին Բայթոնը լոյս բնծայեց մի հատորիկ բանաստեղծութիւնների «Ազատութեան ժամեր։ 53 տարուց յետոյ» 1860ին Ս. Էաճաղեզն էլ նոյն խաղաքով հաստատուեց Մոսկուայում հայերէն բանաստեղծութիւնների մի գրքով, որը դպրոցում կարգացած կիսախրեան հեղինակներից թարգմանութիւններ եւ նմանողութիւններ են, մանաւանդ Բայթոնի ղեկիչի ներշնչման տակ՝ նման զգայունների արտայայտութեամբ քաղցրահնչուն մեղեդիներ ու երգեր, սիրոյ եւ հայրենիքի մասին։ Դա մի նախերգանք է, մի պատանեկան անդրանիկ փորձ, որը թէեւ հասարակութեան ճաշակին համեմիչ չեղաւ, բայց նրանցում բուրում էին պայծառ նշոյլներ թաղնուած տաղանդի՝ ապագայում նպատակին հասնելու։

Մեր ազգային յառաջդիմութեան պատմութեան մէջ մտաւոր եւ բարոյական ժառանգութեան մի նշանաւոր դարագլուխ կազմող ոչ ուսանելի եւ յիշատակելի ժամանակաշրջանի, երբ դարաւոր անշարժ քնի օրրանքներից նոր էր հայ հասարակութիւնը զարթնում եւ մտքի ազատութեան յեղափոխութեան ձգտում դէպի լուսաւորութեան նուիրական գործը, երբ Ս. Նազարեանի, Մ. Նալբանդեանի եւ Ռ. Պատկանեանի քաղաքացիական եւանդումը նոր էր չորհրդում վերածնութեան պայծառ առաջադրող շողողում, երբ գրաբարի դէմ՝ իրենէ հասուն ժամանակի պահանջողութեամբ՝ զարգացման կենդանի ղեկավար գործադրութիւն էր պահանջում ժողովրդի ընդհանուրին հասկանալի եւ դիրքամոռեցի աշխարհիկ լեզուի քաղաքացիութիւնը, երբ զրակաւորութեան եւ հրապարակախօսութեան մէջ ձգտում ներքի, հակումներ եւ իդէալների զանազան գոյն ու կերպարանք ներկայացնող հակադրամադիր իրարանցումը, շփոթը, աշխարհահայեացքների եւ ուղղութեան որոն գաւառանքների հին եւ նոր պատերազմող պայքարները դեռ չէին վերջացել իրենց հաշիւները — ահա այդ պատմական նշանակալից ժամանակ գրական ասպարէզ է դուրս գալիս Ս. Էաճաղեզը «Հիւսիսափայլի» էջերում։

Գրական երեւոյթների ուսումնասիրութեան հետեւող ամէն մի բարեխիղճ հայ մաթք անշուշտ կը խօսաբանի, որ «Հիւսիսափայլի» կատարած դերը հաճախ է եւ ազատամիտ մարակոյական ուղղութեան մէջ առաջնութեան պատուի մեծաբեւութեւ իրաւունքը նրան է արժանի, յետոյ նոյն

1 Սկզբում նոյն մեղքի մէջ էր թաթախուած եւ Գամառ-Փաթիպան իր հոյր Գարեթէ Պատկանեանի իրաւորութեամբ լոյս անսող թերթի մէջ։

ուղղութեամբ շարունակուող ժամանակակից յառաջդիմական «Մշակ» թերթին, «Հիւսիսափայլ» ամսագրի մէջ կուէ-կոփեցին իրենց անդրանիկ հիմնական անյողողող ուժերը Ս. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Ս. Էաճաղեզ, Խորեն Ստեփանէ, Բ. Պատկանեան, Գեորգ Բարխուդարեան, Բոմբ. Բուշուրեզեան, Երեմիա Սահակեան, Սիմոն Ֆելէկեան եւ ուրիշ լուսաւորչ գրիչներ։ Այստեղ առաջին անգամ հնչեցրեց Բաֆֆին Աղթամարայ կղզուց «Չայն տուր, ո՛վ ծովակ», որը այժմ սիրելի երգ է դարձած հայ ժողովրդի բերանում։ Այստեղ յայտնի դարձաւ ընթերցող հասարակութեան՝ ուսու բանաստեղծ Լեւոնտովը «Գեւ» հրաշակեքտ պոէմը թարգմանութեամբ Մանուկ Սաղաւեանի, որի մէջ այդ վաղամեծիկ երիտասարդը ցոյց էր տալիս լուսաւորաստեղծական շնորհ։

«Ազատութեան ժամեր» առաջին փորձից յետոյ, վերապէս 1861ին, դեռ ուսումը ճեմարանումը չաւարտած, Էաճաղեզը ծանօթանում է Յիսկան թուականների մտքի լուսաւորչ գործող ներկայացուցիչների հետ եւ նրանց շարքում ապագութեան է սկսում հետզհետէ իր աստաւորները «Հիւսիսափայլի» մէջ։ «Հիւսիսափայլը եղաւ նրա մտքի լայտերը եւ իմ տեղ բանաստեղծական հռչակի տարածման»։ «Կանուց, ծածացաւ» «Հիւսիսափայլի», անմիջական դպրոցի ազդեցութեան տակ, յիշելով այդ թերթի տաղանդաւոր աշխատակիցներից մէկը, Ս. Նազարեանի ամենամտմաբեր զարեւմ բարեկամը եւ միշտ եւ վերջ երկրպագու եւ պաշտպան նրա դաւանումը «լուսամիտ-մարտնչ չող» զարգացումների ու սկզբունքների։ Այսքան էին մտածել եւ մտերմացել միմեանց, որ երբ Ս. Նազարեանը մահուան անկողնում տառապելիս է եղել, դառնում է երիտասարդ ընկեր Ս. Էաճաղեզին այս անմոռանալի խօսքերով։ «Այո, ինձ մնում է մեռանել, Արեւում ես դու» որ ես մահից երկիւղ ունիմ, ո՛չ, իմ ազնիւ ընկեր, դա մի բնական հարկաւորութիւն է։ Բայց այն սիրելիութեան կապերը, որ կապում էին միմեանց հետ երկու սիրող սրտեր, այն քնքրող յարակցութիւնները, որ կային երկու անձնանուր բարեկամների մէջ, եթէ իմանայիր, որքան դաւանութիւն եմ զգում, երբ մտածում եմ, որ այդ կապերը այդ յարակցութիւնները պիտի քայքայուէին»։

Իսկ Ս. Էաճաղեզը իր սիրելի ուսուցչի եւ մտերիմ ընկերոջ մահից յետոյ՝ «Օրհնեալ մարդու յիշատակին» նուիրում է հետեւեալ ազգու աստաւաորը, որ ներշնչուած է Ոլլաթոփոսի ոտով։

Անձեռագործ դու մահաբան քեզ կանգնեցիր,
Ոչ հողանիւթ, արպես երկաթ կամ օրծաքար,
Ընդօր գործով տուր փաստակով ու անձանիք,
Հուշէ կենդանի եւ յետ մահուան հանգիստացար։
Ահա նոր Ազգ եւ Նոր Էդուզդ իւր ձիւթներն,
Ես ջրով բուսած, քեզ է բերում, ո՛վ Ստեփանոս,
Խաղաղ մնա, մի վրդովուիր, քանն է դափնին,
Խաւարի մէջ լոյս մեզ ծագող Պառնէթէոս,

1 Ըստ Գեղեցիկ տղեր եւ Նուրեւ Էաճաղեզին Լէւոն Անեւակի «Գեղեցիկի» մէջ։

Աշխարհ ծնար եւ աշխարհիս դարձար մշակ,
Բայց չը տեսար այդ աշխարհից անդորրութիւն.
Աշխատար մարդկան բաժին է փշեայ պատկ,
Ո՛հ քրանաշան սկիւներիդ խաղաղութիւն:

Ըստ արժանաւոյն համակիր երախտագիտութեան զգացումը աւելի արտայայտուեց 1881ին՝ «Էրապարակախօս ձայն» կէս-քննադատական եւ կէս-քննադիմախոսական աշխատութեան մէջ, որով կուսի սապարեզ նետուեց Զահագիւղ Աջ. Երիցեանի մի խիստ, բայց տեղ-տեղ անարդար, չափազանցողիկեան հայցրած, քննութեան դէմ՝ քայաբար եւ անկեղծօրէն պաշտպանելով Ս. Նազարեանի օգտաւար անձնաւորութիւնը եւ նրա օրդան՝ «Հիւսիսափայլի», էական արժանաւորութիւնները ազատամտութեան գծուարին հարթած շաղկում: Ըստ հազիկի զայլացած, շանթալից բողբջին եւս արձագանք առաւ Գրիգոր Արծրունին՝ «Մշակ»ում, քննադատութեան ենթարկելով նոյնպէս Ս. Նազարեանի գրական գործունեութիւնը եւ «Էրապարակախօս ձայն»ի համար վկայում էր եւ այն, թէ «կարգացում է յափշտակութեամբ», ձիշտ է որ նրանում գտնուած ենք կորուկ եւ կորովի ոգ, համոզիչ դարձածքներ, միայն նա էլ մէջէ մէջ Երիցեանի պէս միակողմանի չափազանցուեան մէջ էր բնկել:

Պէտք է չմոռանալ, որ Ս. Զահագիւղ ոչ միայն բանաստեղծական, այլ եւ ուսուցչական, մանկավարժական սապարիզում նշանուոր դեր է խաղացել: Նրա աշակերտները համեստ երախտագիտական պարտականութիւն համարելով՝ 1892ի ապրիլի 9ին գնահատեցին նրա 30 ամեայ գործունեութիւնը շքեղ հանդիսով մի կատարած աղ-գային անախմբութեամբ, որին մասնակցեցին շնորհաւորութիւններով երկրի գանազան՝ տեղերից նշանաւոր մարդիկ, գրողներ, խմբագիրներ: Տպուեցին եւ բաւական յօդուածներ թէ կենսագրական եւ թէ յօբելանի մանրամասնութիւնների մասին: Մի տարի այդ հանդիսից յետոյ ինքը Զահագիւղ էր ռուսացած ապուրուութիւնները հրատարակեց «Թօրեկեանի տարեգարմ» շքեղատիպ գրքի մէջ, ուր երկար լուած քնարի մի քանի թրթռուներ հնչեցրեց եւ մի քանի ոտանաւորներով. որ սակայն իր բանաստեղծական փառքի վրայ նոր բան չաւելացրեց, այլ միայն 1890ին նորից յիշելով քնարը, կարծես ցոյց տալ զինք իր հրաժարականը Պաւնաթ մուսային՝ «Ինչէլ մշակ հասարակաց պիտոյդի ուխտած շարունակելի նշանաբան Գաղափարից»:

Մեռաւ իմ մուսան... հանգաւ եւ կրակ.
Անտառը լցուեց շոր տերեւներով,
Երկինքը ծածկուեց, փախաւ արեգակ,
Էլ եւ չեմ ապրում ուրախ երգերով:
Եւ ստեղծագործ բոլորակ գմբէթ
Եւ արծաթափայլ ջրերի խախտիւն
Այլ եւս չի խօսում բանաստեղծի հետ,
Եւ ոչ այցելում աւերած իմ տուն:
Այժմ ինձ մնաց միայն փշեալներ, —
Մար մտաւ ահա եւ նշլոյ վերջին. —
Հանում իմ զբաւս եւ գէն եւ զարգի,
Յանձնում գրանց մանուկ սերնդին:

Ե.

Ռուսահայոց մտաւոր վերանորոգեան կարպետող գործում գուցէ ոչ մի գրական-բանաստեղծական արժէք չեն երկայցեցեր Զահագիւղ, եթէ չունենար գրած «Լեւոնի վիշաք» եւ մուգ գործած շիներ իրեն աշխատակից «Հիւսիսափայլում», Այս, ինչպէս ասացինք, «Լեւոնի վիշաք» թէ առաջ թէ թէ հիմա որ հայկական միակ պոետն է, որի մէջ արտափայլեց Զահագիւղ բանաստեղծական դժբերաժապական նուրբ եւ ներդաշնակ արտայայտութեամբ: Այդ պոետ շնորհի Զահագիւղ ճանաչում է որպէս իսկապէս-բանաստեղծ, նրանով շատ է զբաղուել մեր մամուլը: Լոյս են տեսել քննադատականներ «Մշակ» 1881 թ. 89. Արարատ. 1893 թ. 5. «Մուրճ» 1897 թ. 7—8. «Արձագանք» 1897 թ. 86. «Մուրճ» 1901 թ. 1. «Մուրճ» 1891—1892, Եղեշէ Մատաթեան, «Մտակ» 1898, Կուսիկեան, Վ. Փափագեանի «Վտակ» ժողովուրդում 1901, էջ 33, Մինաս Բերբերեան, նոյնք արտատպած առանձին գրքովով: Լեւոն գրուած եւ «Ստեփանոս Նազարեան, կենսագրականում եւ «Ռուսահայ գրականութիւնը» ուսումնասիրութեան մէջ:

Իսկ Ա. Ծառուարեանը 1897 թուին, էրր Ս. Զահագիւղ Լազարեան ճեմարանից իր հրաժարական ողջոյդը տուաւ, նրա 35 տարուայ վաստակը ներբողութեան արժանացրեց մի գրքովով, եւ նրա յօբելանի առիթով նոյն երիտասարդ շնորհալի բանաստեղծը երեք շատ սիրուն ոտանաւոր է նուիրել իր բանաստեղծութիւնների Ա. եւ Բ. հատորներում: Ահա թէ նա ինչպէս է գրուածում պատկառելի բանաստեղծին, առաջ բերեց իւրաքանչիւրից մի քանի տուն:

...Բայց ոչ... ո՛վ ազգին քաղցրախօս երգիչ,
Դու ուր պարզ եւս ծնար այս աշխարհ.
Դու ծնար պօետ — սիրոյ քարոզիչ,
Դու ծնար ազգիդ անկեղծ սիրահար.
Եւ հնչեց քնարը ազատ, համարձակ.
Նա ոգեւորեց մեր սիրուն ու հոգին.
Եւ ահա այսօր յարատեւ քեզ կեանք
Բարեմաղթում է քո ազգի որդին:

Դառն է մեր կենսը, — տուր մեր օրեր,
Չը կայ մեզ հանգիստ, չը կայ խնդութիւն.
Միայն տառապանք եւ անվերջ վշտեր
Մեր հէգ սրբերից քամում են արեւ...
Նայում ենք վերեւ — ամպամած երկինք,
Նայում ենք ներքեւ — շերտի ուղբի տակ.
Նայում ենք մեր շուրջ — ահեղ փութորիկ,
Իսկ մեր ձեռքերին — շղթայ ու կապանք...
Եւ որպէս խաւար, մաշկուած գիշեր,
Անզօր ողբում են մեր սիրուն ու հոգին,
Եւ քանի բղբեր, քանի խորհուրդներ
Ճնշուած իրհնում են մեր կրծքի տակին...
...Երբեք մեզ անահ, կորովի ձայնով
Փառք եւ յաղթանակ փայլուն գործերի.
Երբեք, որ ազատ քնարիդ լարերով
Ցնցես թելերը թեմբուս սրահի...

... երգիր, թող քո երգն անկեղծ, սգալից,
 Որպէս ջերմ աղօթք հայրենասերի,
 Յրուէ մուլը վըհատ արտերից,
 Բանայ մեզ աղբուր ոսկի յոյսերի...
 ... Դառն է մեր կեանքը, տխուր մեր օրեր,
 Մեզ կաշկանդել է բնութեան շղթան.
 Օ՛, երգիչ, երգիր մեզ հըզօր երգեր,
 Բոցալուռ երգեր ոգեւորութեան...¹

Փառք եւ երանի,
 Բեզ քաջ սերմնացան,
 Որ դաշտն հայրենի
 Հետ թողնում խոպան,
 Որ ջերմ յոյսերով
 Դեռ նրա գրկում
 Ապրում ես սիրով
 Եւ սիրով ասնջվում...

2.

Սմբատ Հաճաղիզը ունի եւ մի քանի աշխատութիւններ, 1897ին նա հրատարակել է «Ամառնային նամակներ», ուր մեծ պաշտպանութիւն է ցոյց տալիս մեր պատմահայր Մովսէս Խորենացուն եւ ընդհանրապէս բանասիրական նիւթեր են պատկերում հայկական լեզուի հանգամանքների, պատմութեան ու կրօնի մասին: Աշխոյժ ոճով գերակշիռ տեղ է տալիս «Հոգեփայտ» զապախարակն ուղղութեան հոսանքներին եւ նրանց առաջադրած բարեքներն է վեր հանում:

Յիշողութիւններ վարդանանց օտնի առիթով, 1901ին, որ նմանվում է Ճառաստանական գրուածքի, վերջրած ճրգ. դարու պատկերներից, յարակցելով եւ ժամանակակիցներին իր գոյների լուսարանութեամբ:

«Մի քանի խօսք իմ ընթերցողներին, մի հրապարակախօսութիւն է, մի ընդարձակ առաջնորդող յօդուած, որով ուզում է քննել լուսարանելով «դի քայն» ինքիւր, թէ «Ասեցէք, Բնչ անենք, որ փոքր ազգերը չը հալուին ժամանակի լայնափոր եւ լայնաբերան ըուրայի մէջ» (էջ 22): Եւ որպէս պատասխան իրեն զբաղեցրած եւ տանջած հարց առաջարկութեան՝ ասում է. «Աթթութեան կացէք. ուր չը կայ լեզու եւ գրականութիւն, մեռած կեանքի յարութիւն էլ չի կարող լինել» (էջ 63):

Նա շատ Ռուսոյի է անցնում բուն խնդրի ուսումնասիրութեան, բայց եւ իրեն յատուկ տեղ է տալով շատ համակրելի կարծիքներ է յայտնում ազատամական տեսութեան եւ կրօնի խնդիրը որոշելու մէջ:

«Գերակշիռը ազգութեան կողմն է եւ ոչ կրօնի, ասում է Հաճաղիզը, այսինքն բոլոր հայերը առաջ պէտք է պաշտեն իրենց հայութիւնը եւ յե-

տոյ դաւանութիւնը: Այս պատճառով եթէ մի բան իմ ուղղութիւնը կաշառէր ու հեռացներ իմ լեզուից, ապա ես պատրաստ էի հրաժարուել նրա բոլոր խոստացած երանութիւններից (էջ 42):

Իսկ գրողներին Հաճաղիզը գեղեցիկ կերպով խրատ է կարգում:

«Ամեն շարագրութիւն պէտք է ներկայացնէ մի աւարտած շինուած, որի մասերը պիտի ունենան ներդաշնակ առնչութիւն դէպ ի մարդը: Իսկ լեզուն, որ լաւ գրութեան գլխաւոր պայմաններից միսն է, պիտի բարեխղճութեամբ մշակել, քերել, տաշել եւ հասցնել ազնիւ քարի գեղեցկութեան: Սրա համար հարկաւոր չէ շտապել, ինչպէս «ով շուտ, նա կուշտ», որ այս դէպքում միշտ քաղցած կը մնայ. հարկաւոր չէ մի քանի տողեր շանգաւել թղթի վրայ եւ յանձնել տպարանին կիսատ գործը. պիտի երկար ու բարակ մշակել, մի անգամ գրածը մի քանի անգամ ջնջել եւ նորից գրել» (էջ 55), այնպէս որ «կրիտիկոսը» անաշու քննելով այն, բոլոր մասերով անորժեղի գտնի եւ ոչ թէ բնիկը պէս ջարդի եւ ողջ տեղ չը թողնի նրա մէջ (էջ 56):

Ե.

«Լեւոնի վիշաք» հրատարակուել է Մոսկուայում 1865 թուին: Ճիշտ է հեղինակը՝ Ժամանակակից վէպը անուանում այդ պոէմին, որովհետեւ նրանում ժամանակակից կենդանի է արտացոլվում իր բնորոշ արտայայտութիւններով, որովհետեւ ժամանակակից շոշափած հասարակական իրական պահանջներն ու խնդիրներն են երգվում այնտեղ, զինքնաբերական համոզութեան եւ յոռաշարիմութեան կաշխառող խաւարի դէմ: Պոէմը նուիրած է Լազարեան ճեմարանի 30ամեակին՝ Բաժանուած է չորս գլխի, իւրաքանչիւրը 150 տնից աւելի ոտանաւորների պարունակութեամբ: Ցեղ-տեղ աղքատ յանգաւոր եւ վտանկական տողեր անհոգ վերաբերութեամբ՝ ստուեր են ձգում աղաչափական կանոնների ու պահանջների գեղեցկութեան դէմ: Յառաջաբան մի ոտանաւոր-խախտեղանքում Հաճաղիզը քաղաքացիական տենդով քաջ պաշտպանում է աշխարհայր լեզուն, որի պայծառացման եւ զարգացման գործում Ս. Նաղարեանի, Մ. Նալբանդեանի, Ռ. Պատկանանի, Պառչեանի, Խ. Աբովեանի եւ Հ. Աղայեանի ուղղութեամբ մեծ ներգործութիւն է ունեցել եւ Ս. Հաճաղիզը:

Նա մարտնչում, հարուածում է հակառակորդներին եւ ողջոյնական ձան է կարգում գրքին եւ սեղանին: Ամեն գլխի ոկղբերում եւ վերջերում նա իր անձնական զգացմունքներն ու խորհրդանշութիւններն է արձագանքում:

Ս. Հաճաղիզին նուիրած 1902 թուին իւրի վեանելովու գիրքը բաղկացած է 103 էջերից եւ զարգարուած է բանաստեղծի պատկերով: Առաջին 56 էջերում նա ծանօթացնում է ուսու ընթերցողներին Ս. Հաճաղիզի բանաստեղծական եւ հրապարակախօսական գործունէութեան հետ: Այդտեղ ցոյց

¹ Այս գործերի ոտանաւոր ամբողջութեամբ տպուած է վեանելովում՝ դեռեւ Արշակի յիշատակին իմ խմբագրութեամբ հրատարակած «Զգացմունք» բանաստեղծական ողբականութիւն մէջ:

է տալիս ուստաց մասնաւորութեան զգալի ազդեցութիւնը հայ բանաստեղծի վրայ, ինչպէս մենք չենք կրնար մեր նախնիքաց յօգուածներում: Նախկին կրօնութիւնները նորանոր լուսարանութիւններով հանդէս է բերում Հայոց հին եւ նոր մասնաւորութիւնների ու բանաստեղծների մասին: Ընդհանրապէս ձեւակոմիսին քննութեան է ենթարկում «Լեւոնի վիշապ», առանց գուրդ գալու նրա շրջանակից:

Եւ իրաւունք ունի այդպէս վարուելու հայ կեանքի եւ գրական երեւոյթների բարեխիղճ աւստմասնութեան գործով տագորուած ուսույթի երիտասարդ մասնաւորութիւնը «Լեւոնի վիշապ», պէտք է քննադատելու մէջ, որովհետեւ այդ պէտքի շնորհիւ է, որ Հայագիրը կը մնայ մեր բանաստեղծական գրականութեան մէջ, որպէս քնարերգական բանաստեղծ, անմոռանալի:

Ը.

Հայագիրը վախճանուեց 1907 թ. Մոսկուայում որտէս պայտուկային: Նրա մահուան շարժումները պատմութեան շատ զբաղեցնող ուսուցող մոմէնտ է: Հատկապէս նրա մահը վերագրում են այն հարուստ վաճառականին, որի հետ բարեկամ է եղել Հայագիրը շարունակ 40 տարի, բայց որը Հայագիրը վերջին ժամանակ բանաստեղծին, շարն է գործ գնում: Նրա վստահութիւնը եւ կեղծ դատ սկսում նրա գէժ մի խոշոր գումարի: Հաւանաբար ուժգին էր Հայագիրը չկարողացաւ դիմանայ, վաղից հարուած է ստանում եւ դրանից առաջ է գալիս մահ: Այդ մահը հայ գրողների համար մի թանկագին կորուստ էր եւ նրանով, որ Հայագիրը կտակը չգտնուեց նրա թղթերի մէջ, ինչպէս յայտնի է, Հայագիրը հիմք էր դրել մի ֆուլբլի «Կապարեան-Արտիստ», անունով, իր սեփական միջոցներով գնելով այդ ֆուլբլի համար 10,000 ուսլայի: Դա վեհ նշանակութիւն ունեցող մի ձեռնարկութիւն էր, որ միայն պատիւ էր բերում նախահեռանդին, որովհետեւ այդ գումարից օգտւում էին հայ գրողներից արժանաւորները: Բայց արի տես, որ Հայագիրի մահից յետոյ կտակը կորաւ. բանից այնպէս դուրս եկաւ՝ իր թէ Հայագիրը որոշած այդ գումարը քիչ համարելով՝ պատուել է հին կտակը եւ կամեցել է նորը կազմակերպել մի ձեռքով յատկացնելով ուսանելի հիմնական, լայն ծրագրով, բայց յանկարծակի մահը վրայ հասնելով՝ արդէն է գնում այդ խոշոր բարեգործական նպատակի իրագործմանը: Ժառանգներից, վերջի վերջոյ, յաջողուեց, ստանալ հայ գրողներին նպատակաւ համար միայն 10,000 ուսլայի, իսկ մնացած ահագին կարողութիւնը անցաւ հանգուցեալի ժառանգների ձեռքը:

Հայագիրի մահուան պատճառներից մէկն էլ համարում են եւ այն ապերախութիւնը, որ նկատում էր նա իր շրջակայաւորների մէջ, որոնք սուտ լուրեր էին տարածում: Եւ մօրի Կոստանի հանդիսացած նրա քարոզած գաղափարներին հետեւելու շարունակութեան մէջ:

Ահա մի նամակ որ նա գրել է ինձ, մի քանի, բողբոջից խոտովանութիւն կեղծիքի, շարակամութեան գէժ:

Իմ ազնիւ քարնկամ

Պ. Գրիգոր Բալասանեան!

Չեր նամակը ստացել եմ, բայց չկարողացայ իսկողնաբանութիւն, ուսկայալ զգալով ալ կռանք մէջ: Այս ժամ ցաւս թեթեւացել է. ահա գրում եմ Ձեզ: Նախ յայտնուի իմ անկեղծ շնորհակալութիւնը Ձեզ որ կամեցել էք Չեր Գրական գեղեցիկ հետ յիշատակները անել եւ մեր մասին, այլ եւ գեղեցիկ պատկեր «Չարկ», մէջ: Գուցէ կամեցել էք Չեր խմբագրական գործողներին հետ պատմասելիք եւ ինձ թերթիդ այնպէսակեղծ: Գրում եմ Ձեզ բացարձակ, որ ես գէտ երիտասարդութեան օրերից չեմ անկեղծ մի տեսակ հաւուս, մի առանձին ընդունակութիւն ու ձգտում աշխատակցելու այս եւ այն լրագրական կամ օրագրական թերթի: Դրա պատճառը գրած է իմ սուրիկեղծ գանգուսի մէջ. այսինքն եմք մի բան հարկադրական կամ ստիպողական է, որ ես մի որոշ ժամանակ պիտի սկսեմ ու վերջացնեմ, երբեք չի կատարուել ու մնացել է անիրագործելի: Այս պատճառով խմբագրար ներողութիւն լինել, որ ես չեմ խոտանալ անպատճառ աշխատակցելու: Իսկ ինչ վերաբերում է Ալ. Դրաստիսեանին, պէտք է տեսնել, որ ես մի քանի տարի առաջ կորել եմ նրա հետ իմ լրագրութիւնները, որովհետեւ նկատել եմ անհարազատութիւն թէ բարեկամութեան եւ թէ գրական մտեւրութեան վերաբերմամբ, որը, գործարարար շատ լինել յատուկ է: Այս, ես այս քան երկար ապրելով աշխարհիս երեսին, պէտք է խոտովանել, որ շատ քիչ եմ վայելել սեր ու սիրելիութիւն: Այս, մի կողմից եմ, միւս կողմից թակարկել, այսօր պատիւ եմ տալիս, էգուց պատուով են տալիս: Այլ առակ լուսարդ. «Այս», Անցել է միայն փառաւորութիւն, առաջադիմութիւն, նշանաբանի տեր դրոշակը...: Եւ մասնաւոր կեցել եւ կեցել Ամբաս Հայագիրեան, այն Հայագիրեան, որ այդ քանակը դրոշակը որոտորդողները մէկն է, որ երեսուն տարուայ ընթացքում այդ ին վերջին փառաւոր կենդանու վերջապիւրջը, — Բայց երբ որ խոտ է բացուում մեր հոգեւոր վերածնունդեան մասին, այդ գաղափարաց աւել բաներ է խոտում:

Այդպէս խոտով, խնդրեմ չկարծել, որ արդեն ինձ պաշարել է զառամութեան հիւսմեքութիւնը. ընդհանրապէս ես կարող եմ վկայել, որ իմ միտքս, իմ հոգիս գէտ ներգաշնակօրէն արամագրուած են գէտի բարին ու լաւը, թէ եւ արդարեւ երբեք ել խանգարում էր այդ ներգաշնակութիւնը մամուլի արամաւանց եղանակները... 8 օրանում եմ «Չարկ» շարժականութիւնը պատմալ վերջինպէս բարդական կեցումները. ես գիտեմ որ Չեր նամակարդը ցանած չէ վարդերով ու մանուշակներով, բայց Չեր հոգու եւանդը ու յամալ աշխատակցութիւնը, ահա քանի եւ յայտնի: Այս մտքով անկեղծ ողբում եմ: Ձեզ եւ բոլոր խմբագրութեանդ, որով մեզ պատրաստական Չեր

8 Փետրուարի 1907:

Ս. ԸԼԱՆԶԱԶ

Այս նամակը մի փառաւոր ապուսակ է եւ այն մարդկանց երեսին, որոնք նայն իսկ չբացուեցին խորհրդիւ՝ օրգանակներ թակելով Հայագիրի թարգմանիքներին (այս) մոռանալով, որ իրենք են ծաղիկ, ինչպէս իրանական քանդակները կենդանութեան ժամանակ: Մինչեւ անգամ նրանք հաւանութեան մամուլի էջերում որպէս Հայագիրի անկեղծ բարեկամներ: Սակայն ինչ է ստուծ ճշմարտաւոր

Թիւնը՝ հանգստեան գործով, այն, որ գրական կամ հասարակական գործիչին պէտք է շարժարեւ կենդանութեան ժամանակ, իսկ երբ մահանայ՝ կսկորդիրտի արտասուք թափել, տաք-տաք ճառերով նրան երկիրք բարձրացնել:

Այս թէ քննէ և ներկայացնում հայկական դժբաղդ իրականութիւնը:

Եռաշափեր.

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍՏԱՆԵԱՆ



Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԲԱՐՔԵՐ ՈՒ ՓԱՌՔԵՐ

ՁԱՊԻՆ ԳՈՐԸՀԻՍՈՐ ԻՐ ԶՈՅԿԻ ՕՐԵՐՈՒՆ

Տարիներու երկար ընթացքին մէջ, ինչպէս ամէն միջավայր իր ուրոյն ու սեփական բարքերը, սովորութիւնները, հաւատալիքներն ու նախապաշարութիւններն ունեցած է, Շապին Գարահիւսարն ալ իր պատմական տեղերէն մէկը՝ բացառութիւն մը կազմելով չէր կրնար զերծ ըլլալ միջավայրի ընդհանուր յատկանիւններ ամբողջացնող վիճակներէն, դաւանանքներէն ու այն բոլոր ցեղունի ու առտնին ինքնատուութիւններէն, որոնց հազիւ մէկ աննշան հատուածն է զոր պիտի փորձեմ ներկայացնել այժմ առաւել կամ նուազ մանրամասնութեամբ:

Սկսելէ առաջ՝ լուսագոյն կարգադրութիւն մը ըրած ըլլալու կանխակալ դիտաւորութեամբ, անհրաժեշտ կը նկատեմ գործը դասաւորել գլխաւոր եօթը բաժանութիւնով՝ զատկի շարքուման եօթն օրերուն համապատասխան, այնպէս որ հետաքրքիր ընթերցողը դիւրութիւնը պիտի ունենայ, կերպով մը, առանց չիտթութիւններու եւ կնճիռի՝ հետեւելու անսպթաք անոր այլազան փուլերուն ու վերլուծելու պատկերներն ու գրուագները:

* * *

Անագ Երկուշաբթի:

Հնհնուկի օրեր: Առտուն կանուխ մութն ու լուսուն առնը իրար կ'անցնի: Ցաներիկմարդը բաւական քաջքան բաներ ունի կարգադրելիք: Փոքրիկները իրենց արտաքին յարգաբանքի պատրաստութիւններու մտահոգութիւններն ունին հայրիկին ոտքերուն կառչած: Մեծ մայրը աղօնի հոգսերով օրօրուն լուսաճի ցորենները կը ծուէ՛լ: Հարսներն ու աղիկներն տաշտերուն գլուխը՝

մինոցուորած, իւրաքանչիւր իր աշխատութիւններով կը զբաղի անձանձիր: Զարացանին բոժոժաւոր գրաստներն ճամբայ պիտի ելլեն քիչ վերջ, լուացուած, դուռած, մարբուած ցորենը աղօրիկ փոխադրելու: Քալան պիտի մեկնի անոնց հետ իրիկուան ալիւրին հետ վերագաւառայու պայմանով, տիրող ընդհանուր ոգեւորութեան մէջ մոռնալու համար պահ մը ամբողջ օրուան մը տաժանքներն ու յոգնութիւններն: Թիթեռներէ թռուկներ շուրջը պիտի բողբոլին օրոնց ամէն մէկուն բան մը պիտի ունենայ ապահովաբար ըսելիք, անոր տաքուկ համբոյր մը, ուրիշի մը կախարդող խոստումներ, երրորդի մը մանկունակ հէքեաթի՝ մը նախաբանը:

Անագ Երեքշաբթի:

Դպրոց չկայ կը պոռան, չկայ կը բացական լինալու թիւն ու լիահագագ վարժատան շարահճի մանչերն աստանդական: Վայ է եկեր այն տուններուն, որոնք արձակուրդի տղաքներ ունին իրենց մօտ: Հոգի մարմին չի մնար խեղճ մայրեցուն քով, որոնք բանելէն-դատելէն ժամանակ չեն ունենար գլուխին իսկ վեր վերցնելու: Ըմիտտ, խեռ, գլուղտան մէկեր են յաճախ այդ փափկները, որ խօսք մտիկ չեն ընել, «Տօ. ըրածնին» «Ը» չեն ընել, ու «կան չե կան» չեն հասկնար երբեք: Կամշոտ առաջարկութիւններով տակն ու վրայ կ'ընեն ամէն կողմ, գող կատուներու պէս անոնք տան «ծակն ու ծուկ» «իլիկն ու դիլիկ» ք գիտեն:

Դպրոցի սենեակներուն մէջ ժամը գիրք կարդացողներու հատընտիր խմբակ մը կը մնայ միայն պատուելիին քոյմտի զատկուան երաժշտութիւններու ու զանազան եղանակներու վարժութիւն ընելու համար առաւելագետ:

Անագ Զորեքշաբթի:

Եփեւ թափել, աւել մաղել, վաթել, լուալ, ու գրեթէ այսօր այս ամէն բաները: Բուխերիկներու կատարներուն վրայ մուխի թանձր ու անթափանձ գուլաներ կը դարձարձակին, կը բարձրանան, կը ծաւալին ու կ'անդայտանան առաւելաւ: Խաչ-երկաթներուն վրայ շարուած պուտուկներուն տակը լայնափոր թոնիրին հրաշէկ բոցերը կը կայծկուտան, կը ճարձատն ու կը հրահրին: «Զրտաք» թոնիրին մօտիկ մանաւոր խորութեան մը մէջ կ'եփի, կ'եռայ ու կը շոգիանայ, ուրկէ կ'սկսեմք թոնիրի հանգրիւնէ պծրիկ աղիկներ երկայն կոթ շերեփներով